

# «ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

#### «ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի վերջում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

**«Ռազմական նշանակության արտադրանքի արտադրություն՝** ռազմատեխնիկական ոլորտում օգտագործվող սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, հետազոտություն, մշակում, փորձարկում, պատրաստում, գեղարվեստական հարդարում, նորոգում, ինչպես նաև ռազմամթերքի, փամփուլշտների և դրանց բաղկացուցիչ մասերի պատրաստում» բառերը՝

**Հոդված 2.** Օրենքի 22-րդ հոդվածի՝

1-ին մասում՝ «տեղեկատվությունները» բառից հետո լրացնել «(ռազմական նշանակության արտադրանքի, այդ թվում մարտական զենքի դեպքում՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան)» բառերը,

4-րդ մասի առաջին պարբերության վերջում լրացնել «(ռազմական նշանակության ապրանքների, այդ թվում մարտական զենքի դեպքում՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան)» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի աղյուսակի 4-րդ ենթակետում «Ձեռքի» բառը փոխարինել «Ռազմական նշանակության արտադրանքների, այդ թվում զենքի» բառերով: